

ՂԱԶՄՐՈՍ ԱՂԱՅԱՆԸ



ս կարդացել էի Ղազարոսի գրվածքները, լսել նրա մասին, տեսել լուսանկարը, բայց անձամբ նրա հետ ծանոթ չէի, մինչև նրա նոր-Նախիջևան աքսորվելը, 1898 թվի մայիս ամսին, երբ առաջին անգամ տեսա նրան ու մի քանի օրից հետո էլ ծանոթացա հետք: Պետք է ասեմ, որ այդ ժամանակները նա ոչ վառվուն երիտասարդ էր, ոչ էլ միջին տարիքի՝ առնական տղամարդ, այլ ծերության՝ 57-60-ի հասած մի մարդ, բանտ նստած, ընկճրված...

Առաջին անգամ ես նրան տեսա ինձ անձանոթ մարդկանց հետ քաղաքի «ասֆալտապատում» զրունակիս, այսինքն օրիորդաց գիմնազիայի, նորաշեն թատրոնի ու քաղաքային դպրոցի շենքերի առջև, ասֆալտապատ ու ծառազարդ փողոցում, որը քաղաքացիների սովորական զրոսավայրն էր հանդիսանում: Ղազարոսը իր բարձր հասակով, ծղնոտե գիսարկով և անխնամ հագած ամառային վերնազգեստով աշքի էր ընկնում զրոսնողների մեջ: Այդ մայիսի վերջին օրերին էր, երբ ես, զբաղված լինելով թեմական դպրոցի տարեկերջի քննություններով, ըշտապում էի և մյուս կողմից էլ ծանոթանալու համար վայրը անհարմար համարեցի, թեև շատ մեծ ցանկություն ունեի ծանոթանալու իմ ծանոթանալը հետաձգելով մի այլ հարմար առիթի, ես շտապեցի դպրոց, ուր պատմեցի այդ մասին: Ուսուցիչներից շատերն արդեն իմացել էին նրա քաղաքում գտնվելու մասին: Ի միջի այլոց խոսք բացվեց և այն մասին, որ անհրաժեշտ է այցելել աքսորյալներին ու մխիթարել նրանց, որպեսզի նրանք շատ էլ զգան իրենց աքսորի դառնությունը: Այս ամենը, իհարկե, ի միջի այլոց էր և լոկ մտքերի փոխանակություն էր

հանդիսանում, բայց հենց այդպես էլ կատարվեց...

Հանդիպեցի Մինաս Բերբերյանին ու որոշեցինք առաջին այցելությունը միասին կատարել: Նույն օրը երեկոյան էլ այցելեցինք: Նրանք սիրով, քաղցրությամբ ու համբույրներով ընդունեցին մեզ: Պարզվեց, որ նրանց բնակարանը քաղաքի կենտրոնումն է, ամեն վայրին մոտիկ, հարմար ու վայելու Այդ Բերբերյանն էր հոգացել ու Ղազարոսին իր ընտանիքի հետ միասին երկու սենյակ տրամադրել: Մի սենյակի էլ նա տրամադրել էր Ղազարոսի ընկերոջը՝ Ալեքսանդր Ստեփանյանին, որն ապրում էր իր մոր հետ միասին: Այս երեք սենյակներն էլ գտնվում էին Բերբերյանի բնակած շենքի ցածի հարկումը:

Նստեցինք. թեյ մատուցին: Աղայանը կանչեց Ստեփանյանին ու ծանոթացրեց մեզ նրա հետ: Հայտնվեց, որ նա Աղայանի հավատարիմ ընկերը, Թիֆլիսին լավ հայտնի Սև Սանդրոն էր, թունդ «Մշակ»-ական, Պետրոս Աղամյանի ու նկարիչ Բաշինչաղյանի մտերիմ բարեկամը, Թիֆլիսի հայ հասարակության մեջ կշիռ ունեցող մի անձնավորություն: Մեր խոսակցությունը սկզբում վերաբերում էր նրանց ճանապարհորդությանը: Աղայանը շատ գոհ էր մնացել իրենց կատարած ծովային ճանապարհորդությունից:

— Հրաշալի էր, հրաշալի, — ասում էր նա, — ալիքների ծփծփոցը, ծովի ախորժելի հովը, ծովից ելնող լուսինը, դելֆինների խաղը հանգստացնում են մարդուն. շնչում ես ազատ և քաղաքի գաղջ օդից բռնված կուրծքը լայնանում է, այդ զգալի էր մանավանդ ինձ, բանտարկյալիս, համար:

Այսուհետև մեր խոսակցությունն անդրագավնրանց աքսորման շարժառիթներին մենք հարց ու փորձ արինք նրանց մեղադրական գործի մասին և Աղայանը համա-

ոռտակի մեզ բացատրեց թե ինչումն էր կա-
լանում իրենց մեղադրանքը:*)

— Իմ գործը դունքիշոյան մի բան էր, ևս
բարի եմ ցանել, շար է բուել, իմ բարե-
մտությունը շարամտություն է հասկացվել.
սխալանքը փմս չէ, այլ ժամանակինը, մով,
խառնաշփոթ ժամանակինը, երբ դժվար է
չոկել, տարբերել շարը բարուց, վնասակարն
օգտավետից... է՛ջ, ինչ պուփաներդ ցավեց-
նեմ, ևս վաս բան չեմ արել, վնասակար
մտքեր չեմ քարոզել և ես իմ արածներից ու
ասածներից հիմա էլ չեմ հրաժարվում... ա-
սաց նա ու հուսահատությամբ գլուխը կա-
խեց:

Մենք մեր հոգու խորքում սաստիկ ցավ
զգացինք. նրա խոսքերը գուսպ էին, բայց
հուզիչ ու համոզիչ: Նա ժամանակից շուտ
ծերացած ու ընկնձած էր երևում: Միսիթարե-
ցինք նրան, որքան կարող էինք, և շտապե-
ցինք մեկնել, չկամենալով ավելի ու ավելի
բրբրել նրա խորը վերքերը: Վերջում նա
ցանկություն հայտնեց ծանոթանալու գա-
ղութին, նրա հայկական հաստատություն-
ներին ու գործերին. մենք բաժանվեցինք,
խոստանալով կատարել նրա այդ ցանկու-
թյունը:

Մի օր, երբ ազատ էի, գնացի խոստումն
կատարելու: Աղայանը առողջամիտ ու հա-
մակրելի մարդու տպավորություն էր թողել
իմ վրա:

Առավոտ էր, օրը կիրակի. դուրս բաց
թեց ինքը Աղայանը.

— Հա՛, եկար խոստմունքդ կատարե-
լո՞ւ, — ասաց նա, — այն օրը տխուր բա-
ժանվեցինք, այսօր տեսնում ես ուրախ եմ.
բա. ի՞նչ անեի, եղբայր, ինձ, վայրենի կըխ-
տարիս, որ սովոր էր փարել բարձր լեռնե-
րին ու խիտ անտառներին, փակել էին չորս
պատերի արանքում, կընկճվեի, բա ո՞նց:
Դի՞չ, գնանք, ուր տանելու ես, տար: Սան-
դրու, — ձախ տվեց նա, — արի՛ գնանք:

Թետք էլ ասել ու Աղայանն առանց Սանդ-
րոյի տեղ չէր գնում: Եվ առհասարակ զարմա-
նալի էր Աղայանի վերաբերմունքը նրա հան-
դեպ. եղակի ու տարօրինակ բան էր այս եր-
կուսի հարաբերությունը: Սանդրոն Աղայա-
նի նկատմամբ հսկողիշ խնամակալի պաշ-
տոն էր կատարում, իսկ Աղայանն էլ բոլո-
րանվեր հնազանդում, կատարում էր նրա
բոլոր պատվերները:

*) Թե Ղազարոսի հետ միաժամանակ ովքեր են
եղել արսորված, սուսուգ չգիտենք. Նախիշեան ար-
սորվածներից ճանաչում էինք Հովհաննես Միքայա-
նին, իր կոտ հետ, և Արտապետին կամ Սարգսին Մու-
րայաշանին՝ իր կոտ հետ. սրանց հետ մենք մոտ
հարաբերություններ էինք ուսեղենի:

— Ղազա՛ր, վզնոցդ կապի՛ր, սառը չուր
մի՛ խմիր, Ղազա՛ր, վերաբուդ կոճկի՛ր,
դուքսը ցուրտ է, մի՛ խոսիր և ալլն... Եվ Ա-
ղայանը միշտ էլ շտապում էր կատարել ըն-
կերոց բուրոր գգուշացնող հրամանները. ե-
րկի դրանք բժշկի տված պատվերներն էին,
որ Սանդրոն սիրով, առանց ձանձրանալու
միշտ հիշեցնում էր նրան:

Գնացինք Ս. Լուսավորիչ եկեղեցին՝ Դրի-
մից բերված ուշագրության արժանի ձեռա-
գրերը դիտելու: Մտանք եկեղեցին. պատա-
րագը վերջանալու մոտ էր և մենք պետք է
սպասեինք մինչև վերջանար: Նրգում էր եր-
գեցիկ խումբը, և այնպես լավ, մեղմ, դու-
րեկան, որ չնկատեցինք, թե ինչպես անցավ
ժամանակը և մեր առջև բացվեց ձեռագրա-
տան դուրս: Ձեռագրատունը բավարար մե-
ծությամբ մի սենյակ էր. երկու-երեք հար-
յուր ձեռագիր կարգով շարված էին նորաշնն
րնդարձակ պահարանում. ավելի թանկար-
ժեք ձեռագրերը դրված էին առանձին, մի
փոքրիկ պահարանի մեջ: Զենք կարող չհի-
շել այստեղ, որ այդ բոլոր հարմարություն-
ները սեղծվել էին լազարյան ճեմարանի
վկեռնի հոգեոր բաժնին նախկին ուսանող
և Ս. Լուսավորիչ եկեղեցու ավագ քահանա
Տեր Խաչատոր Զարիֆյանի ձեռքով, մի
բան, որ քանից Աղայանի գոհության ու
գովասանքի առարկան եղավ:

— Ո՞ւր էր, որ հայ եկեղեցիներից շա-
տոերն այսպիսի քահանաներ ունենային, —
ասում էր նա:

Սկսեցինք դիտել ձեռագրերը. հարմարու-
թյան համար նախ փոքր պահարանից ըն-
տիր ձեռագրերը հանեցինք ու կարգով շա-
րեցինք սեղանի վրա: Ես ուստանասիրել էի
պատմական Նոր-Նախիշեանը, ծանոթ էի
այստեղ բերված ձեռագրերի պատմությա-
նը, և բնականաբար, ի վիճակի էի բավա-
րաբերու Աղայանի պարզ հարցասիրությունն
այն մասին, թե ո՞րտեղից էին այս կամ այն
ձեռագրերը Դրիմ բերվել, ո՞ր ժամանակա-
շըրջանում են գրված, ո՞րոնք են նրանցից
ամենաարժեքավորները, նրանցից որը ի՞նչ
առանձնահատկությամբ է օժտված, և այլն,
և այլն:

Իմ բացատրությունները լինուց հետո Ա-
ղայանը ուշագրությամբ մեկիկ-մեկիկ աշքի
անցկացրեց 10—12 ընտիր ձեռագրերը և
նրանց մեջ գտավ, ինձ արդեն հայտնի,
ու 1643 թվին դրված, Շարակնոց-Սաղմո-
սարանը, որի վերջին թերթերի վրա տեղի շե-
ղագրով գրված և Աստվածամոր կուսին նը-
միքրված ներբույր այնքան հավանեց, որ
նախ բարձր ձայնով կարդացաւ և ապա խըն-
դրեց թույլ տալ արտագրելու և, իրեն հի-
շատակ, իր մոտ պահելու Յույց տված վ-

սելու համար թե մեր հին երգերից որպիսի-
ների սիրահար էր Ղազարոսը, ստորև բե-
րում ենք այդ ներբողը.

Անենաղին տաճար,
Բանին նաշտարաք
Գերազոյն զտար, Մարիամ:
Դուռն երկնից զայլալ
Երգեն Սերովերեն,
Զարմանան Քերովերեն,
Երանյալ սուրբ կույս Մարիամ:
Ընեարշալու ի Փրկչեն,
Թազը պարծանաց,
Ժառանգ ավետյաց,
Խոկուի մաքուր Մարիամ:
Լուսին աներման,
Խորան խընդալի,
Մառ նարընջենի,
Կարքալ քաղցրախոս, Մարիամ:
Հավիկ սիրալի,
Զայն բա տառակի,
Ղամբար զիշերի,
Մըրան զիշերի,
Ճարագ լուսատու, Մարիամ:
Հեռյալ ընդ ոսկի,
Նարդոս քրումի,
Շուշան ի դաշտի, Մարիամ:
Ոսկի ձուլածոփ,
Զի կա ժեզ նըման
Պտուդ ցանկալի,
Զուր մաքուր, հստակ, Մարիամ:
Խամբը վերին,
Սատաֆ ի ծովին,
Վաճիշ մարզարտին,
Տանար տերունի, Մարիամ:
Բարունուն վերին,
Յող զարնանալին,
Քո նոխ պատկերին,
Ի հյուայլ ոսկով,
Փափաբյալ ցանկամ, Մարիամ:

Չնկատեցինք թե ինչպես ձեռագերով
զբաղվելով բավականին ուշացել էինք.
Չտապեցինք հավաքել ձեռագերով, տեղա-

վորել բանալիները հանձնել ու դուրս գալ:
Աղալանը ներբողի լավ առղերը միտն էր
պահել ու ճանապարհին հաճախ կրկնում էր.

Լուսին աներման,
Խորան խընդալի,
Մառ նարընջենի,
Կարքալ քաղցրախոս, Մարիամ*):

Նոր-Նախիչևանի ու Բեսարաբիայի թե-
մական գպրանոցի ուսուցչական կազմը մի
լավ սովորություն ուներ, որ երբ ուսման
տարին ավարտվում էր, նա գպրանոցի բա-
կում մի համեստ տոնախմբություն կազմա-
կերպելով ողջունում էր ուսումնական տար-
վա հաջող ավարտը և ապա միայն արձա-
կուրդի մեկնում: Այդ տարին էլ նույնը կա-
տարկեց, բայց մի փոքրիկ տարբերությամբ,
որ տոնախմբությանը մասնակցելու համար
հրավիրված էր նաև Աղայանը, որպես մեր
բաղաքում գտնվող հայ ուսուցիչ և գրակա-
նագետ մանկավարդ: Աղայանի հետ հրա-
վիրված էր նաև նրա ընկեր Սանդրոն:

Հրավիրը ես տարա: Դեռ կարնուխ էր, ուս-
տի հարկավոր համարեցի մեր օրվա հյուրին
մի քանի տեղեկություններ հաղորդել դրա-
բանոցի մասին: Գեորգ Դ Վեհափառ Հայրա-
պետի կաթողիկոսության օրոք նոր-Նախի-
չևանում բացվել էր չորդասյան հոգևոր դրա-
բոց: տարիներ անցնելուց հետո, երբ փակ-
վել էր Խալիբյան գպրոցը թեռողոսայում,
Հոգևոր դպրոցն էլ վերափոխվել էր թեմական
դպրանոցի, ժառանգելով Խալիբյան դպրոցի
տպարանը, մատենադարանը և թանկարժեք
շենքը ու բաղաքի օխոնախու կոչված շենքը
թեռողոսիայում:

Եկանք դպրանոց, ուր մեր հյուրը իր ընկե-
րոց հետ սրտանց ընդունելության արժանա-
ցավ: Խոսքն ու զրուցը, ճառերն ու կենաց-
ները, ծիծաղն ու երգերը տեղեցին մինչև գի-
շերլա կեսը: Ղազարոսի քեֆը բացվեց և նա
երգեց իր թյորողին:

Ա՞յ Քյորողի, ջա՞ն Քյորողի,
Ա՞յ Քյորողի, ջա՞ն Քյորողի,
Քեզ խարեց Համզան, Քյորողի, հա՞յ, հա՞յ, հա՞յ...
Բայց որ դառել ես զաղացպան,
Կանչիր րող զան, Քյորողի, ջա՞ն,
Ջա՞ն, Քյորողի, ջա՞ն,
Ջա՞ն Քյորողի:

* Ներբողի հեղինակի ով լինելը մեզ անհայտ է.
Ճեռագրի մեջ մի անորոշ ժամոթագրություն կա, ու-
պիսկոպոսին գրածն է, որից երևում է, որ Հեղինա-

կը անծանոթ չի եղել իր ժամանակակիցներին: Ներ-
բողից երևում է, որ այդ եպիսկոպոսը հայտնի եր-
գահուա պետք է եղած լինի:

Մարդու բախտն էլ ահա այսպես:
Պարտվոսմ է շաղացի պես.
Մեկ օր ահոնի վիշտապ ես,
Մյուս օր շաղացպան, Քյորողի:

Բայց դու էլի Քյորողին ես.
Ժողովրդի սիրելին ես.
Թեկուզ շաղացպան էլ լինես,
Թեզ պատիկ կրտա՞ն, Քյորողի:

Թեև Ղոարիցը գրկված,
Բայց բուր ունիս Վրցաղ կապած
Համզան ստրուկ, բոկից փախած,
Խսկ դու ազատ, խա՞ն Քյորողի:

Սոտրդ կանչիր հըսկաներիդ,
Հավատարիմ կտրիներիդ,
Թող գան գտնեն փախած գերիդ,
Չըկորչի Համզա՞ն, Քյորողի:

— Ղազա՛ր, կես գիշեր է, քեզ վնաս է
այդպես բարձր երգելը, — ասում էր Սանդ-
րոն:

— Այս՝ իհարկի, բայց քեֆս բացվել է,
Սանդրո շան, եթե այսօր մի լավ քեֆ շանեմ,
էլ ո՞րուել պիտի գտնեմ այսպիսի ընկերու-
թյուն:

Ղազարուը առանձնապես լավ ձայն չու-
ներ, բայց որ քեֆը տեղն էր լինում, նա իր
պարզ երգը այնպիսի ովարությամբ, այն-
պես շեշտված էր երգում, որ բոլորին
վարակում էր ու ամենքն էլ նրան ձայ-
նակցելով կրկնում էին նրա բա-
ռերը օջա՞ն Քյորողի շա՞ն, շա՞ն Քյո-
րողին և այլն. ստացվում էր մի անուշ
երաժշտություն: Թիֆլիսին կարուտած լինե-
լով նա երգում էր մի ուրիշ երգ էլ, որը վե-
րաբերում էր Թիֆլիսին. այդ երգի բնագիրը
չեմ հիշում, միայն միտու է մնացել նրանից
«Ճանապարհ» ընկապվ Թիֆլիս» բառերը:

Անցավ մի քանի օր. առավոտ էր. Սև
Սադրոն եկավ և հաղորդեց ինձ, որ Ղազա-
րուը ծանր հիվանդ է և տաքության մեջ զա-
ռանցում է... ևս անշանգստացաց և շտա-
պեցի այցելել նրան: Երբ ներս մտա, տեսա
նրան հագնված, անկողնում նստած և ճա-
կատին սառը կոմպես դրած: Այդ օրերին
նա շատ էր զբաղվել Ղարաբաղի բարբառի
քննությամբ ու այդ գիշերն էլ խսպառ չէր
քննել, որի հետևանքով ակսել էր անմիտ ու
կցկոտք բաներ խռուել, վախեցնելով յուրա-
յիններին: Անհրաժեշտ էր նրան զբաղեցնել
բոլորովին մի այլ խնդրով, ուստի և ես ա-
ռաջարկեցի նրան միասին Դոնի ափը գնալ
զբոսնելու և դիտելու գետի երկու ճյուղի բա-
ժանվելու տեղի գեղեցիկ տեսարանը, գոյա-
ցած կղզին, լաստակամուրզը և այլն: Այս
մասին էի խռոսում, երբ ներս եկավ դպրանո-

ցի ուսուցիչներից Ստեփան Սմբատյանը, որը
բազմաթիվ զվարժալի պատմություններ գի-
տեր Նոր-Նախիջևանի կյանքից և համով-հո-
տով պատմում էր դրանք: Մենք հիմանդին
մեզ հետ առնելով սկսեցինք քաղաքի բարձ-
րավանդակից իշնել գեպի ցած, գեպի գետի
ափը: Մի կողմից այն գեղեցիկ տեսարան-
ները, որոնք հաջորդաբար բացվում էին մեր
առջե, և մյուս կողմից էլ այն զվարժալի
պատմությունները, որ պատմում էր Սըմ-
բատյանը, շոտով Ղազարուին մոռացնել
տվին գիշերը նրա գլխով անցածները, և նա
ինքն էլ սկսեց ասել, խոսել, ծիծաղել ու
պատմել իր գլխով անցած զնացածներից:

Զբոսանքից հետո վերաբարձրանք մեր տու-
նը, տանն եղած բարիքից հապճեալ պատ-
րասոված ճաշ անուշ արինք և մեր սիրելի
Ղազարուին ուրախ, զվարթ ու միանգամայն
առողջ վիճակում ճանապարհ դրինք իր բնա-
կարանը, որ թե՛ իր ընտանիքին և թե՛ մեզ
բոլորիս մեծ ուրախություն պատճառեց: Երբ
հասանք նրա բնակարանը, նա մեզ անմիջա-
պես ետ վերադառնալ շթողեց, այլ, ծղնոտի
գլխարկն ու «կրիլատկան» հանելով ու բազ-
մոցի վրա նետելով, պատվիրեց բերել թեր-
բերյանի նվիրած «Ռոնի շամպայնը». ապա
իրեն հատուկ շեշտով նա ավելացրեց.

— Այս օրը իմ այստեղ անցկացրած օրե-
րից ամենալավագույնն է, և որովհետև դրա
պատճառը իմ սիրելի երվանդն է, ես գրկում,
համբուրում եմ նրա ճակատը, առաջարկե-
լով իմել նրա կենացը, խսկ, ի հիշատակ,
նվիրում եմ նրան այս իմ ձեռագիր գրմաժքը:

Այս ասելով նա տվեց ինձ ձեռագիրը. ես
բաց անելով կարդացի ձեռագիր խորագի-
րը, որ հետևալ էր. «Ղազարոս Աղայանի
քննադատականը Այվազովսկի Գարբիել ե-
պիսկոպոսի Հազար ու մի առակավոր

բանքի վերաբերմաժբաւ Այս նվիրական գրվածքը ևս սիրով կարդացի ու պահեցի թղթերին մէջ, և երբ 1922 թիվ Հունիսին փոխադրված էի Երևան, աշխատանքի հրավիրված լինելով Հայաստան, հետո բերի և այդ թանկարժեք հիշատակը ու նվիրեցի Թանգարանի Գրական բաժնին, որի վարիչն էի կարգվել ևս:

Ստույգ շգփատեմ թի Աղայանը ու բքան ժամանակով էր արորվել՝ ինչքան ինձ հայտնի է, նա աքսորվել էր 1898 թվի մայիսին և աքսորում մնացել է 1898 թ. մայիսից մինչև 1899 թ. նոյեմբեր ամիսը: Այդ ժամանակամիջոցում, մոտ մի տարի, 1898 թ. մայիսի 18-ից մինչև 1899 թ. ապրիլ ամիսը, նա ապրեց Նոր-Նախիջևանում, իսկ մնացյալ 7 ամիսը Հին Ղրիմում ու Թեղոսիայում: Այնուհետև նա վերադարձել էր Թիֆլիս, ուր 1902 թվին կատարվել էր նրա հորելանը:

Նոր-Նախիջևանում ամառվա ամիսներին նա գոյն է եղել իր կենցաղից թե՛ բարոյապես և թե՛ նյութապես: Օգոստոսի վերջերին, նոր դպրոցական տարվա սկզբին, նա իր փոքր որդի Մուշեղին ուղարկել էր թեմական դպրանոցն ուսանելու, երեխան, ըստ իր գիտության ու տարիքի, ընդունվել է բարձր նախակրթարանը (թեմական դպրանոցն ուներ երեք նախակրթարանային բաժին՝ ստորին, միջին և բարձր): Ըստ մեր գիտողության, երեխան լավ պատրաստված էր այդ բաժնի համար, որ, իհարկե, պետք էր վերաբերել մանկավարժ հորը: Հայերեն նա լավ խոսում էր, վարժ կարգում և կարդացած ը մբռնում: Նա ինքն էլ մի թույուն, աշքաբաց ու սիրելի մանուկ էր:

Աղայանը ծայրահեղ բժախնդիր ու խստապահանջ էր ուսուցիչների նկատմամբ: այս առթիվ մեր միջև հաճախ վեճեր էին ծագում,

սուր վիճաբանություններ տեղի ունենում, սակայն դրանք միշտ էլ վերքանում էին փոխադրձ համաձայնությամբ, մի բան, որ մեզ ավելի էր իրար մոտեցնում ու իրար հարգել տալիս:


Ինչ վերաբերում էր ձմեռը Նախիջևանում նրա մնալուն, մենք միշտ էլ նրան այս առթիվ գգուշացնում էինք, նկատի առնելով ձրմեռները Նախիջևանի կլիմայի խստությունը, խստություն, որին դժվար թե կարողանար դիմանալ նրա հյուծված մարմինը և խախտված առողջությունը, որ մեր կարծիքը ճիշտ էր: արդեն գեկտեմբերին ու հունվարին նրա տաքության աստիճանը սովորականից միշտ բարձր էր լինում, իսկ հունվարի վերջերին երեսմն հանում էր 38—39 աստիճանի:

Բնտանեկան մի փոքրիկ խորհրդակցություն տեղի ունեցավ, որին մասնակցեցի նաև ևս, որոշվեց, որ նա մի դիմում գրի ում և ուր հարկն է և խնդրի թույլտրվություն բնակության փոխադրվելու էսքի-Ղրիմ:

Գործը, ըստ սովորության, ձգձգվեց և նա ստիպված եղավ սպասել մինչև մարտի վերջերը, երբ վերջապես ստացվեց ցանկալի թույլտրվությունը:

Հիշում եմ, ապրիլ ամսվա սկզբի օրերն էին, երբ ճանապարհ դրինք նրան: նա սիրում էր ծովային ճանապարհորդությունը, ուստի նշանակված օրը և ժամին սիրող հարգողների մի խոմբ հավաքվել էր Ռուսությունի նավահանգստում՝ նրան ճանապարհ գելու համար: նավ ուղեկցելով՝ նրան շրջապատած մնացինք մինչև վերջին ազգանշանը, և բաժանվեցինք նրանից գրկախառնությամբ ու համբույրներով:

Նավը քարափին միացնող սանդուխքը վերաշեցին, խարիսխը շառաւշումով վեր բարձր



Ղազարոս Աղայան

բացրին և նավը սկսեց շարժվել ու կամաց կամաց հեռանալ մեղնից: Ինկ Ղազարոսը գեր երկար ժամանակ շարունակում էր կանգնած մեալ տախտակամածի վրա. նա շարունակ օդային համբուլըներ էր ուղարկում մեզ և ի հիշատակ նախիեանում անցկացրած օրերի, երգում էր Ս. Լուսավորչի եկեղեցու ձեռագրի վերը մեր բերած ներբողը:

Հավիկ սիրալի,

Զայն բո տատրակի,

Ղամբար գիշերի,

Մըրան գիշերի,

Ճրագ լուսատու, Մարիամ:

Մենք էլ նրա օդային համբուլըներին պատասխանում էինք թաշկինակների թափահարությամբ... և երբ նավը բռորովին հեռացավ ու աննկատելի դարձավ, տիտուր ու տրտում վերադարձանք նախիեան:

Ղազարոսին վերջին անգամ ես տեսաթիվիսում 1908 թվին, երբ շտապ հայրենիք էի գնում և մի երկու օր թիվիսում կանգ էի առել բարեկամներին տեսմելու համար: Թիվիս ժամանելու մյուս օրը առավոտյան դրուս եկա «Կավկազ» հյուրանոցից, որտեղ իշեանել էի, և մտադրությունս կատարած լինելու համար ցանկացաց առաջին հերթին այցելել Ղազարոսին. սակայն նրա ընակարանի հասցեն լավ շգիտել և ստիպված քայլերս ուղղեցի դեպի Հովհաննես Միքայելին անականական անձնագիրը և ճանապարհին անակնկալ կերպով պատահեցի հենց իրեն Աղայանին, որը զբունում էր մի կարճահամասկ ծեր մարդու հետ միասին: Խնձ տեսնելուց նա շատ ուրախացավ, մնաս բարով ասաց իր հետ զբունողին, թեև մտավ ու գնացինք: Արևոտ օր էր. նա ուզում էր ինձ մի հով տեղ տանել:

^{*)} Աղայանը Սմբատ Շահազիզին այնքան էր սիրում, որ նրա մասին խոսելիս չէր ասում Սմբատը, այլ «Սմբատոս»: Որքան ինձ հայտնի է, նրանք անձամբ իրար հետ ծանոթ էլ չեն եղել, նրանց ժայռությունը սկսել է նամակագրությամբ: Ֆոնդի տոկոսներից Շահազիզը Ղազարոսին բաժին էր հանում առանց վերջինիս գիմելում, խնդրելուն: Ղազարոսի հարցին, թե ինչո՞ւ եմ հայրենիք շատապում, ևս չէի պատասխանել և միայն ճաշի ժամանակ նրա ականջին փափացել էի, որ հայրենիք եմ շտապում կիսամեռիկ ֆոնդը վերստին վերականգնելու համար: Ֆոնդի վերականգնումը վերաբերում էր ինձ ու իմ եղբայրներին: Հորեղբայրս վախճանվել էր 1907 թվականի 24-ին, առանց տնօրինելու ֆոնդի խնդիրը: Հանգույցալիք աճյունը հողում ամփոփելուց հետո երբ թաղման հանձնառողով վերջնաշաշկվ էր տեսնում, ինձնից հարցրին հորեղբայրս թողած կտակի

որ երկար ու հանգիստ դրուցելու համար հարմար լիներ:

Կանգնեցինք ֆումիկուլորի կայարանում և սար բարձրանալով տեղավորվեցինք սրճարանի սեղաններից մեկի շուրջը. նա սուրճ պատվիրեց:

— Դե՛մ, հիմա ասա, տեսնենք ի՞նչ կա չկա, ու՞ր ես գնում, ի՞նչու ես շտապում ալդակես, — իրար հետևից շուրջ շուրջ հարցեր էր տալիս նա:

Ես զննողական հայացքով նայեցի նրան. նա շատ ծերացած, ալեխառնված երեաց ինձ: Նրա հարցերին մեկ առ մեկ պատասխանությունը հարցը հետո հարցրի:

— Ես ուզում եմ քո կարծիքն իմանալ Արովյան-Նազարյան գրական ֆոնդի մասին, որը հիմնել է Սմբատ Շահազիզը, քո լավ բարեկամը:

— Այդ ի՞նչ հարցմոնք է, — ասաց նու, — դրան երկու պատասխան լինել չի կարող, այլ միայն մի, մի, լուսն ես: Նա ազատություն սիրող մարդ էր և կամենալով իր անձի, մտքի ու հոգու ազատությունն ապահովել, չքաշվեց փարել բորսայի գոներին ու հասակ իր նպատակին, դարձավ հայ իեզվի աղա ուսուցիչ և հայ աղա գրականագետ, և դրանով էլ չքաշվականանալով կամեցավ իր նմաններին էլ ազատել շունիմությունից, որի համար էլ հիմնադրեց հիշյալ ֆոնդը: Եվ շատ լավ է արել: Չունիմությունը մաշել ու մաշում է հայ գրականագետների հոգին, նվաստացրել ու նվաստացնում է մեզ, դրա հետ և այն ազնիվ ու կարևոր ազգային գործը, որին ծառայում ենք մենքք^{*)}):

Ես լուս նայում էի նրան. նա նստած տեղից վեր էր կացել, շտկվել ամբողջ հասակով մեկ. նրա աշքերը ցոլում էին և իմ առջեկ կանգնած էր դարձյալ առաջվա Ղազարոս Աղայանը: Ես ամուր սեղմեցի նրա:

ինչպես նաև ֆոնդի գոմարի մասին: Ես հայտնեցի, որ այդ մասին որևէ որոշակի բան ասել չեմ կարող և ինձ հայտնի է միայն այն, որ նա կոտկ թողել է, որի մանրամասնությունները գեռ ինձ հայտնի չեն: Ինչ վերաբերում էր ֆոնդի գոմարին, ևս հայտնեցի, որ չեմ կարծում թե նա խառնած լիներ իր սեփական գրամի հետ, քանի որ, ինչքան ինձ հայտնի էր, ևս սովորություն ուներ ֆոնդի գոմարը անեցնելու համար պարող տալու իր բարեկամներին ո՞չ թե բանկային հինգ տոկոսով, այլ ավելի բարձր տոկոսով: Ուրեմն մնամ էր հարց ու փորձ անել բարեկամներին և այս ձևով ստուգել ֆոնդի գոմարի վիճակը:

Դրանով էլ հանձնաժողովի նիստի, որին հասնակցում էի և ես, փակեց և խնդիրը սպասաված համարվեց: Երբ ժողովականները սկսեցին ցրվել, Նիկողայոս Ժամայացանը ինձ, Գրիգոր Խալաթյանին և երկու ուրիշ անձնաց մի ուրիշ սենյակ հրավիրելով.

ծեռքը: Մեր խոսակցությունը բավական ժամանակ տևեց: Վերադարձին նա ինձ ճանապարհ դրեց մինչև հյուգանոց և պարտադրեց, որպեսզի հաջորդ օրը ճաշին լինեմ իր տանը՝ հաշենի անուշահամ գինիով թարմ լոթ վայելելու համար:

Մյուս օրը ճիշտ նշանակված ժամին նրա տանն էի. Հրավիրված էին նաև մեր ընդհանուր ծանոթներից մի քանիսը: Շատ լավ ժամանակ անցկացրինք. ես մի անգամ էլ լսեցի նրա «Քյորողին» ու ես էլ իր հետ երգեցի «Այլ Քյորողի», շան «Քյորողի»: Վերջում Ղազարուս երգեց նոր-Նախիջևանի զվարճալի «Հարբան Միկիտի խաղը»:

Այու, Այու, Դեկի՛,
Տոմը յալիին քովն է.
Դրացիին ինադեն
Մամսա կրակն կերե:

Այս խաղը, իրքի գաղութային երգ, իր բավանդակությամբ և ու տառը Նախիջևանի

ցույց տվեց մի ժրար, որի վրա ոռակերն գրված էր «Պահ-Ազգ»:

Հանգուցյալը այս ժրարը իր ոմեցվածքի հետ միասին հանձնել է մեր բանկին ի պահպանություն... Մենք շգիտեինք թե ի՞նչ կար նրա մեջ և այժմ՝ լի չդիտենք, — ասաց Ժամհարյանը և զառնալով ինձ, իրքի ժառանգներից մեկին, թույլտվություն խնդրեց ժրարը բաց անելու:

Մրարը բացվեց և նրա մեջ գտնվեց այնքանի մուրճակ, որբան ֆոնդի գումարն էր, այդ գումարը նա պարտ էր տափած սղել մոսկովարնակ նոր-Նախիջևանից մի ուներ վաճառականի: Այսպիսով ֆոնդի գումարը գտնվեց, սակայն, պետական օրենքով այդ գումարը այլև գումար համարել չէր կարող, բանի որ Շահազիդի կողմից պարտը արված լինելով, պետք է կազմեր նրա կարողության մի մասը և, խառնվելով կարողության ընդհանուր գումարին, բաժանվեց ժառանգների միջև, վերջիններին ժառանգական իրավունքները հաստատվելուց հետո: Մնում էր միան, որ ժառանգներից լորժարանչուրը ինքնական կերպով իր ստացածից բաժին հաներ հօգուտ ֆոնդի

բարբառին հատուվ ժողով արտասահելու սովորությամբ, շատ զվարճացրեց բոլորին և ամենքն էլ հոհուալով բաժանվեցինք միմյանցից: Ամենից վերջը դուրս եկա ես. համբուրվեցինք.

— Մնա բարով շեմ ասում, այլ ցտեսություն, — ասացի ես:

— Զեմ կարծում, — պատասխանեց նա տիսրությամբ, — ես հիվանդ եմ, լուրջ հիվանդ, Հին Ղրիմում շնչարգելովթյունս այնքան էր թեթևացել, որ առանց նեղության կարողանում էի սարերը բարձրանալ անգամ, իսկ այստեղ ալժմ նույնիսկ գմիւրանում եմ շատ ման գալ, կարծես խեղում է...*)

Տարիներ անցան... 1911 թվին սրտի դառնությամբ կարդացի, որ հունիսի 20-ին Ղազարուսը հանկարծամահ է եղել:

Հեգ և ամենիս սիրելի Ղազարուս, ինչքան լավ իդմեր ուներ:

այս շափով, որ ստացվեր ֆոնդի գումարը: Ահա հնաց սրա համար էլ ես հայրենիք էի շտապում: Ինձ հաջողվեց այդ իրագործել ժառանգներից միայն հանգուցյալի եղբայրը մերժեց կատարել իր բարյական պարտականությունը: Այսպիսով կիսամենիկ ֆոնդը վերականգնվեց ու հանձնվեց Բարեգործական Ընկերությանը՝ նշված նպատակի համար գործադրելու պայմանով:

*) Աղայանը մի ասողակազմ աղամարդ էր, ծնված, սնված ու մեծացած մաքուր օդի մեջ: Նրա առողջության վրա չըր ազդել և նրա գրաշարական գրադմունքը Թիֆլիսում, Թեղողոսիայում, Մոսկվայում ու Փետերբուրգում. Նրա առողջությունը բայթայեց միայն ու միայն բանտարկությունը, որը զորեղապես ազդեց նրա թոքերի վրա: Հին Ղրիմում նա այնքան էր կազմություն, որ առանց դժվարության զըսնում էր սարերի վրա և մինչև անգամ որոշել էր ոտով շրջագայել Ղրիմի հայկական գաղութի պատմական վայրերը Բայց Թիֆլիս՝ վերադառնալուց հետո նրա թոքերի հիվանդությունը նորից բորբոքվում է, ավելի զրբել կերպով, որին և զո՞ւ է զնում նա:

